*Հաստատված է՝*
*ՀՀ փաստաբանների պալատի*
*խորհրդի 18.12.2014թ. 35/8-Լ*
*որոշմամբ*

*Խորհրդի նախագահ՝*
*Արա Զոհրաբյան*

_____

# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԳ

**ք. Երևան, 2014թ.**

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**1.** Փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու կարգը **(այսուհետև՝ Կարգ)** սահմանում է փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու ընթացակարգը, ժամկետները, ժամերի հաշվարկը, պատասխանատվության, հաշվետվողականության, ինչպես նաև վերապատրաստման հետ կապված այլ հարաբերությունները:

**2.** Կարգն ընդունված է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, 19-րդ հոդվածի 4.1-րդ կետի և 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն:

**3.** Վերապատրաստման նպատակը փաստաբանների հմտությունների, գիտելիքի և մասնագիտական պատրաստվածության բարձրացումն է՝ շարունակական մասնագիտական (փաստաբանական) ուսուցման միջոցով:

**4.** Կարգը պարտադիր է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանների պալատ)** բոլոր անդամների համար:

## II. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**5.** Փաստաբանների անվճար վերապատրաստումը սույն կարգով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում է ՀՀ փաստաբանների պալատը:

**6.** Փաստաբանների վերապատրաստում կարող է իրականացվել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ Փաստաբանական դպրոց**) կողմից՝ փաստաբանի հետ համապատասխան պայմանագիր կնքելու միջոցով:

**7.** Փաստաբանների վերապատրաստում կարող է իրականացվել նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված այլ կազմակերպությունների կողմից:

## III. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

**8.** Յուրաքանչյուր կիսամյակի (վեց ամսվա) համար փաստաբանը՝ Կարգով նախատեսված ժամկետում և ընթացակարգով, պետք է անցնի **12** (**տասներկու**) ակադեմիական ժամ (**այսուհետ՝ ժամ, 1 (մեկ) ակադեմիական ժամը հավասար է 40 (քառասուն) րոպեի**) վերապատրաստում: Կիսամյակի հաշվարկը՝ ա) սկսվում է հունվար ամսից և ավարտվում հունիսին (ներառյալ), կամ բ) սկսվում է հուլիս ամսից և ավարտվում դեկտեմբերին (ներառյալ):

**9.** Այն դեպքում, երբ փաստաբանն արտոնագիր է ստացել հաշվետու կիսամյակի ամիսներից որևէ մեկի ընթացքում (անկախ ամսվա օրվանից), ապա վերապատրաստման կիսամյակի 12 (տասներկու) ժամի փոխարեն մինչև հաշվետու կիսամյակի վերջին ամիսը (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար փաստաբանը կարող է վերապատրաստվել յուրաքանչյուր 1 (մեկ) ամիսը՝ 2 (երկու) ժամ հաշվարկով: Սույն կետում նշված կարգավորումը տարածվում է նաև կասեցված արտոնագրի գործողությունը վերականգնած, ինչպես նաև սույն Կարգի IV-րդ գլխում նշված փաստաբանների նկատմամբ, բացառությամբ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից լրացուցիչ վերապատրաստման ժամեր սահմանելու դեպքերի:

**10.** Փաստաբանների վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են խմբերով, բացառությամբ հեռավար կամ առցանց ձևերով իրականացվող վերապատրաստման:

**11.** Վերապատրաստումը կարող է իրականացվել նաև հեռավար ձևով (**համացանցի միջոցով միաժամանակյա դիտման ռեժիմում**): Հեռավար ձևով վերապատրաստմանը կարող են մասնակցել միայն՝

- Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի վարչական տարածքներում հաշվառված և գործունեություն ծավալող փաստաբանները.
- այլ պետությունում գտնվող փաստաբանները.
- տեղաշարժման սահմանափակումներով պայմանավորված առողջական խնդիրներ ունեցող փաստաբանները՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշման հիման վրա.
- այն փաստաբանները, որոնց թույլատրված է մասնակցել կոնկրետ թեմայով վերապատրաստմանը և հայտարարության մեջ նախապես տեղեկացված են տվյալ վերապատրաստման դասընթացը հեռավար ձևով անցնելու մասին:

**12.** Վերապատրաստումը կարող է իրականացվել նաև առցանց ձևով: Առցանց ձևով (**նախապես տեսաձայնագրված դասը սահմանված կարգով դիտելու միջոցով**) վերապատրաստմանը կարող են մասնակցել բոլոր փաստաբանները, սակայն մեկ կիսամյակի համար ոչ ավել 4 (չորս) ժամից, բացառությամբ սույն կարգի 11-րդ կետում նշված փաստաբանների, ովքեր նախապես դիմում են ներկայացրել պարտադիր վերապատրաստման բոլոր ժամերն առցանց ձևով լրացնելու մասին:

***(կետը լրացվել է ՀՀ ՓՊ խորհրդի 21.12.2016թ. թիվ 26/5-Լ որոշմամբ)***

**13.** Հեռավար կամ առցանց ձևով վերապատրաստման իրականացման կարգը սահմանվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ:

**14.** Վերապատրաստման դասընթացների թեմաների հրապարակումից հետո փաստաբաններն էլեկտրոնային կամ այլ՝ գրանցվող անձի ինքնությունը պարզելու հնարավորություն ընձեռող եղանակով գրանցվում են վերապատրաստմանը մասնակցելու համար:

**15.** Վերապատրաստման դասընթացի համար գրանցումը սկսվում է դասընթացի օրվանից առնվազն 7 (յոթ) օր առաջ և ավարտվում է 3 (երեք) օր առաջ: Բացառիկ դեպքերում, երբ վերապատրաստման խումբը չի ձևավորվել, վերապատրաստման համար գրանցվելու ժամկետը կարող է երկարացվել մինչև վերապատրաստման դասընթացի նախորդ օրը: Այն դեպքում, երբ համապատասխան խումբը չի ձևավորվել և այդ հիմքով որոշվել է դասընթացի օրը տեղափոխել, գրանցված անձանց էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է ուղարկվում վերապատրաստման դասընթացի օրը տեղափոխելու մասին:

## IV. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

**16.** Արտոնագիրը վերականգնած փաստաբանը պարտավոր է իր հաշվին լրացուցիչ անցնել վերապատրաստման դասընթացներ՝ կասեցված յուրաքանչյուր ամսվա համար 2 (երկու) ժամ ժամաքանակով: Փաստաբանի հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ անցնելու ժամանակաշրջանը սահմանում է ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը:

**17.** ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից լրացուցիչ վերապատրաստման ժամանակաշրջան սահմանված չլինելու դեպքում, փաստաբանը լրացուցիչ վերապատրաստման դասընթաց պարտավոր է անցնել խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 6 (վեց) ամսվա ընթացքում:

**18.** Փաստաբանն իր հաշվին վերապատրաստման դասընթացներին մասնակցելու դեպքում պարտավոր է առնվազն երեք օր առաջ առձեռն կամ փոստային ծառայության միջոցով գրավոր տեղեկացնել ՀՀ փաստաբանների պալատին, նշելով՝

ա) խորհրդի որոշման ամսաթիվը և համարը, որի հիման վրա սահմանվել է լրացուցիչ վերապատրաստում,

բ) արտոնագրի համարը,

գ) ՀՀ փաստաբանների պալատի, Փաստաբանական դպրոցի, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված կամ ՀՀ փաստաբանների պալատի կողմից ընդունելի վերապատրաստում իրականացնող այլ կազմակերպության անվանումը,

***(ենթակետը փոփոխվել է ՀՀ ՓՊ խորհրդի 21.12.2016թ. թիվ 26/5-L որոշմամբ)***

դ) դասընթացավարի անունը, ազգանունը,

ե) դասընթացի թեման և

զ) դասընթացի անցկացման օրը, ժամը և վայրը:

Դիմումը պետք է ստորագրված լինի փաստաբանի կողմից, դիմումին պետք է կցված լինի վերապատրաստում իրականացնող կազմակերպությանը վճարում կատարելու փաստը հաստատող անդորրագրի պատճենը (կամ այդ կազմակերպության գրավոր հավաստումը, որ տեղեկացված է փաստաբանի կողմից իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու անհրաժեշտության մասին): Սույն կետում նշված կարգի խախտմամբ իրականացված վերապատրաստումը ՀՀ փաստաբանների պալատը չի հաշվարկելու: Սույն կետում նշված կանոնները կիրառվում են նաև լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ձևով կարգապահական տույժի ենթարկված փաստաբանների նկատմամբ:

## V. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

**19.** Փաստաբանական դպրոցում դասավանդող կամ ՀՀ փաստաբանների պալատում վերապատրաստման դասընթացն անցկացնող փաստաբանների դասընթացի յուրաքանչյուր ակադեմիական ժամը հավասարեցվում է վերապատրաստման մեկ ժամի:

***(կետը փոփոխվել է ՀՀ ՓՊ խորհրդի 21.12.2016թ. թիվ 26/5-L որոշմամբ)***

**20.** Փաստաբանական դպրոցի ունկնդիրների, անկախ վերջիններիս քանակից, պրակտիկան (փորձուսուցումը) փաստաբանի կողմից լրիվ ծավալով ղեկավարելը հավասարեցվում է վերապատրաստման համար նախատեսված 12 (տասներկու) ժամի՝ յուրաքանչյուր կիսամյակի համար: Նշված ժամերը հաշվարկվում են այն կիսամյակի համար, որի ընթացքում արձանագրվել է փաստաբանի կողմից ունկնդրի պրակտիկան լրիվ ծավալով ղեկավարած լինելու (պրակտիկայի ավարտի) փաստը:

***(կետը փոփոխվել է ՀՀ ՓՊ խորհրդի 21.12.2016թ. թիվ 26/5-L որոշմամբ)***

**21.** Վերապատրաստման համար նախատեսված 12 (տասներկու) ժամը

լրացնելուց հետո փաստաբանը կարող է մասնակցել վերապատրաստման դասընթացներին, եթե խմբում կա թափուր տեղ, սակայն այդ դասընթացի մասնակցության ժամաքանակը (բացառությամբ սույն կարգի 36-րդ կետում նշված թեմայով դասընթացի) այդ փաստաբանի համար չի հաշվարկվում և չի տեղափոխվում հաջորդ կիսամյակ:

**22.** Փաստաբանների՝ արտերկրում վերապատրաստման կամ այլ ուսումնական դասընթացներին (սեմինարներին) մասնակցության ժամերը ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից կարող են ներառվել (հաշվարկվել) փաստաբանի պարտադիր, իսկ համապատասխան վճարման անդորրագրի ներկայացման դեպքում նաև լրացուցիչ վերապատրաստման ժամաքանակում՝ կախված դասընթացի թեմայից և դասընթացավարից կամ դասընթացը կազմակերպող ուսումնական հաստատությունից:

***(կետը փոփոխվել է ՀՀ ՓՊ խորհրդի 21.12.2016թ. թիվ 26/5-Լ որոշմամբ)***

**23.** ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների (ինչպես նաև խորհրդի նախագահի), հաշվիչ հանձնաժողովի անդամների, որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամների, ՀՀ փաստաբանների պալատի կողմից ձևավորած հանձնաժողովների (աշխատանքային խմբերի, այդ թվում՝ ժամանակավոր), ինչպես նաև ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի փաստաբան անդամների կողմից խորհրդի և հանձնաժողովի (հանձնախմբերի, աշխատանքային խմբերի) նիստերին (այդ թվում՝ որակավորման քննություններին, աշխատանքներին, քննարկումներին) մասնակցության երեք ժամը հավասարեցվում է վերապատրաստման մեկ ժամի: Այն դեպքում, երբ հնարավոր չէ ճշգրիտ հաշվարկել նիստի տևողությունը, ապա մեկ նիստը հավասարեցվում է վերապատրաստման մեկ ժամի: Փաստաբանների կողմից ՀՀ փաստաբանների պալատի ակումբի նիստերին մասնակցելու ժամերը համամասնորեն հաշվարկվում են որպես պարտադիր վերապատրաստման ժամեր:

***(կետը փոփոխվել է ՀՀ ՓՊ խորհրդի 21.12.2016թ. թիվ 26/5-Լ որոշմամբ)***

**23.**[1] Փաստաբանի դիմումի հիման վրա վերապատրաստման դասընթացներին հավասարեցվում է փաստաբանի կողմից մասնագիտական գիտական աշխատության կամ ձեռնարկի կամ դասագրքի հրատարակումը, ինչպես նաև գիտաժողովի մասնակցությունը, եթե ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից կազմավորված գիտամեթոդական հանձնաժողովը բավարարել է փաստաբանի դիմումը: Սույն կետում նշված հանձնաժողովը կազմավորվում է երեք փաստաբան անդամից և գործում է երկու տարի ժամկետով:

***(կետը լրացվել է ՀՀ ՓՊ խորհրդի 21.12.2016թ. թիվ 26/5-Լ որոշմամբ)***

## VI. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**24.** Փաստաբանական դպրոցը, ինչպես նաև հավատարմագրված կազմակերպությունները յուրաքանչյուր ամսվա համար, մինչև հաջորդ ամսվա տասը տեղեկանք են ներկայացնում ՀՀ փաստաբանների պալատին վերապատրաստված փաստաբանների մասին՝ նշելով փաստաբանի տվյալները, վերապատրաստված ժամերի քանակը, վերապատրաստման թեման և դասավանդողի տվյալները:

**25.** ՀՀ փաստաբանների պալատը փաստաբանի դիմումի հիման վրա երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է տեղեկանք տվյալ տարվա

ընթացքում վերապատրաստված ժամերի մասին:

**26.** ՀՀ փաստաբանների պալատը վերապատրաստման ժամերի վերաբերյալ տեղեկությունները կարող է անհատապես տեղադրել www.advocates.am կայքում՝ յուրաքանչյուր փաստաբանի անձնական էջում, որը տեսանելի է լինելու միայն փաստաբանի համար:

## VII. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

**27.** Կարգը խախտելու համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված կարգով:

**28.** Վերապատրաստման համար գրանցված, սակայն վերապատրաստմանն անհարգելի պատճառով չներկայացած կամ չանցած փաստաբանը սպառում է այդ վերապատրաստման դասընթացի համար նախատեսված անվճար ժամերի չափով դասընթաց անցնելու իր հնարավորությունը: Այս դեպքում փաստաբանն այդ ժամերը պարտավոր է լրացնել իր հաշվին: Վերապատրաստման չներկայանալը կամ չանցնելը հարգելի ճանաչելու խնդրանքով փաստաբանը՝ տասնօրյա ժամկետում գրավոր դիմում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահին:

**29.** ՀՀ փաստաբանների պալատը չի ենթարկում կարգապահական պատասխանատվության վերապատրաստմանը չմասնակցած՝

- փաստաբանական գործունեություն չիրականացնող 70 տարին լրացած փաստաբաններին.
- փաստաբանական գործունեություն չիրականացնող առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող փաստաբաններին.
- մինչև ծննդաբերությունը երեք ամիս ժամանակով և ծննդաբերությունից հետո մեկ տարի ժամանակով կին փաստաբաններին (հաշվարկի համար հիմք է ընդունվելու մեկ ամիս՝ երկու ժամ համամասնությունը).
- այլ պետությունում ուսուցում անցնող փաստաբաններին, եթե նրանք նախապես գրավոր (կամ էլեկտրոնային փոստով) տեղեկացրել են ՀՀ փաստաբանների պալատին.
- Փաստաբանական դպրոցի շրջանավարտ փաստաբաններին՝ Փաստաբանական դպրոցն ավարտելու պահից հաշված մեկ տարվա ընթացքում (հաշվարկի համար հիմք է ընդունվելու մեկ ամիս՝ երկու ժամ համամասնությունը).
- մինչև հեռավար կամ առցանց ձևով վերապատրաստման հնարավորություն ընձեռելը՝ այլ պետությունում մշտապես (մեկ տարվա ընթացքում 183 օրից ավել) բնակվող փաստաբաններին, եթե նրանք նախապես գրավոր (կամ էլեկտրոնային փոստով) տեղեկացրել են ՀՀ փաստաբանների պալատին.
- պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսներին՝ համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու դեպքում.

***(ենթակետը լրացվել է ՀՀ ՓՊ խորհրդի 21.12.2016թ. թիվ 26/5-Լ որոշմամբ)***

- կարգապահական գործ նախապատրաստող անձանց:

***(ենթակետը լրացվել է ՀՀ ՓՊ խորհրդի 21.12.2016թ. թիվ 26/5-Լ որոշմամբ)***

**30.** Սույն կարգի 29-րդ կետի առաջին և երկրորդ ենթակետերում նշված փաստաբանները գրավոր հայտարարություն են ներկայացնում ՀՀ փաստաբանների պալատի նախագահին՝ փաստաբանական գործունեություն չիրականացնելու վերաբերյալ:

**30.**[1] Եթե փաստաբանը գրավոր դիմում (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) է ներկայացնում Պալատին՝ պարտավորվելով հաշվետու կիսամյակում չանցած վերապատրաստման դասընթացների ժամերն իր հաշվին անցնել հաջորդ կիսամյակում, ապա՝

– կարգապահական վարույթ չի հարուցվում հաշվետու կիսամյակի համար վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով.

– վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով փաստաբանի նկատմամբ առաջին անգամ հարուցված կարգապահական վարույթը կարճվում է:

***(կետը լրացվել է [ՀՀ ՓՊ խորհրդի 29.10.2015թ. թիվ 28/8-Լ որոշմամբ](#))***

**30.**[2] Վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով փաստաբանի նկատմամբ առաջին անգամ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, եթե փաստաբանը գրավոր դիմում (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) է ներկայացնում Պալատի խորհրդին՝ ապացուցելով, որ գտնվել է արտերկրում, բացառությամբ, այն դեպքի, երբ փաստաբանի համար գործում է հեռավար վերապատրաստման հնարավորությունը:

***(կետը լրացվել է [ՀՀ ՓՊ խորհրդի 29.10.2015թ. թիվ 28/8-Լ որոշմամբ](#))***

**30.**[3] Սույն կարգի 30.[1] և 30.[2] կետերում նշված արտոնությունից փաստաբանը կարող է օգտվել միայն մեկ անգամ:

***(կետը լրացվել է [ՀՀ ՓՊ խորհրդի 29.10.2015թ. թիվ 28/8-Լ որոշմամբ](#))***

## VII[1] ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՉՄԱՍՆԱԿՑԱԾ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

30.[4] ՀՀ փաստաբանների պալատը վերապատրաստման դասընթացներին չմասնակցած փաստաբանների կարգապահական պատասխանատվության հարցը քննարկելիս կիրառում է պատասխանատվության աստիճանաբար խստացնելու քաղաքականություն:

30.[5] ՀՀ փաստաբանական դպրոցը 2017-2018թթ. չորս կիսամյակների ժամանակահատվածում վերապատրաստմանը չմասնակցելու հիմքով փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելու հարցը քննարկելու համար համապատասխան տեղեկանք տրամադրելիս առաջնահերթ անդրադառնում է այն փաստաբանին, ով՝

- հաշվետու կիսամյակի ընթացքում չի մասնակցել որևէ վերապատրաստման դասընթացի, կամ
- վերջին երկու տարվա ընթացքում ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անկախ տույժը մարված լինելու կամ տույժ նշանակելու մասին որոշումը ուժի մեջ մտնելու հանգամանքից), կամ
- որպես արտոնություն, խնդրել է կարճել վերապատրաստմանը չմասնակցելու հիմքով նախկինում հարուցված կարգապահական վարույթը, հաջորդ կիսամյակում վերապատրաստման դասընթացին մասնակցելու

հիմքով, և չի մասնակցել այդ վերապատրաստման դասընթացին, կամ

- հաշվետու կիսամյակի ընթացքում չի մասնակցել Պալատի խորհրդի որոշմամբ սահմանված լրացուցիչ վերապատրաստման դասընթացի:

***(գլուխը լրացվել է ՀՀ ՓՊ խորհրդի 15.06.2017թ. թիվ 13/10-Լ որոշմամբ)***

## VIII. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԱՆՁԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

**31.** Վերապատրաստման համար թեմաները սահմանում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահը:

**32.** Վերապատրաստման թեմաների ընտրության համար հիմք է հանդիսանում ՀՀ փաստաբանների պալատի վերապատրաստման հարցերով պատասխանատու աշխատակցի կողմից կազմված տեղեկանքը, որը կազմվում է փաստաբանների շրջանում կատարվող հարցումների արդյունքում:

**33.** Վերապատրաստման թեմաների ցանկը նախապես հաստատվում է յուրաքանչյուր կիսամյակի համար:

**34.** Վերապատրաստման դասընթացների ժամանակացույցը հաստատվում է յուրաքանչյուր ամսվա համար:

**35.** Դասավանդող անձանց ընտրությունը կատարվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ հաստատված կարգով՝ փաստաբանների կամ այլ մասնագետների կազմից՝ հաստատված թեմաների շրջանակում:

**36.** Փաստաբանները երկու տարվա ընթացքում առնվազն չորս ժամ պետք է վերապատրաստվեն «Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» առարկայի շրջանակներում հաստատված թեմաներով: Մնացած թեմաները փաստաբաններն ընտրում են իրենց հայեցողությամբ:

***(կետը փոփոխվել է ՀՀ ՓՊ խորհրդի 21.12.2016թ. թիվ 26/5-Լ որոշմամբ)***

## IX. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**37.** Կարգն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից և գործում է անժամկետ:

**38.** Հեռավար կամ առցանց ձևով վերապատրաստման հնարավորություն նախատեսվելուց հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստաբանները կարող են անվճար կարգով մասնակցել ՀՀ փաստաբանների պալատի կողմից անցկացվող դասընթացներին:

**39.** Կարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող է կատարել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը:

**40.** Սույն կարգի 36-րդ կետում նշված երկու տարվա ժամկետի հաշվարկը սկսվում է 2017 թվականի հունվարի 1-ից:

***(կետը լրացվել է ՀՀ ՓՊ խորհրդի 21.12.2016թ. թիվ 26/5-Լ որոշմամբ)***

* * *